

ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐԷՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆՆՈՒ

Իրազլիոն (Կրեկ), 15 - 4 - 1959

Պատուարժան Խմբագրություն

«Սիոն» պատուական ամսագրի

Երևույթում

Շատ յարգելի եւ սիրելի հայր Խմբագիր,

Հանդիմով եւ խորին շնորհակալությամբ ստացալ «Սիոն» Յունուար եւ Փետրուար միացեալ քիւեր, զոր բարեհաճած էք ինձի զրկելու՝ այնքան բարութեամբ եւ ազնուութեամբ :

Անոնց ընթերցումը ինձի համար եղաւ իրական խնայք մը՝ հոգեպարար եւ արագուստն . էջերը զարդարուած էին մէկը միւսէն աւելի բաղդը, հիւքել եւ համեղ խորխոնեումով՝ որոնք մօքի սնունդ եւ հոգիի բաւարարութիւն կը ջամբեն իրաւամբ :

Շատեց կը փափաքէի «Սիոն» ընթերցումը վաշելի . բայց նիւթական պատճառներ արգելք էին եղած այս բաղձանքին իրագործման . հազար փա՛ռք Ամենակալին որ տուիւն է ամենայն բարեաց, եւ անհուն շնորհապատիւներ մեղուաջան Միաբանութեանն Ս . Յաւաւարութեամբ եւ անձնոյր զոհողութեամբ կը պանծանէ եւ կը բարգաւաճէ Ս . Տեղեաց ազգ . սեփականութիւններ որոնք իրա՛ւ պարծանքներ են Ազգիւ Հայոց :

Այս առթիւ , մէկ բանի հակիրճ քննարկելու ակնարկներ աւելորդ չեմ համարիր զրի առնել «Երեւոյս հայ համայնքին վերաբերմամբ : Իրազլիոն Կրեկ» կողմի ամենէն վաճառաւան կեդրոնն է . իսկ Կրեկն՝ Հիլեմական քաղկն ամենէն փայլուն գոհարներէն մէկն է : Հոս կար նին դարերէն հաստատուած հայ գաղութ մը , որ աւա՛ղ , ժամանակի զլանը մաշեցուցած եւ անհետացուցած է իսպառ : Այսօրուան գաղութը նոր ժամանակներու մէջ հաստատուած է . ունինք 30-35 ընտանիքներ՝ նիւթական փշ շատ բաւարար վիճակով . ունինք կոկիկ բարաւէն եկեղեցի՝ որ 300 տարուան հնութեան դրումը կը կրէ : Առանց հերքուելու երկիւղ ունենալու կարող եմ հաւատալ որ ամուր բերդ մը դարձած է անընդլիճ կործանարար ամէն տեսակի ժաւակաւն ազդակներու :

Մտազինս կը մաղբեմ Ձեզ կարողութիւն եւ բաշտողութիւն՝ միշտ բաշտար վաշելու համար Ձեր բերուն գործը՝ յօգուտ Ազգիւ եւ ի պայծառութիւն Հայ Առաք . Ուղղափառ Ս . եկեղեցւոյ :

Մնամ աղօթակից

Հոգ . Հովիւ Համայնքին Հայոց Կրեկի

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽԱՉԱԿԻՐ ՔԶՆՅ . ՎԱՐԴՈՒՆԻ

Ս . ՅԱՎՈՐԻ ՆԵՐՍԷՆ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Վեհափառ Թագաւորի արտասահմանէն ապա-
հով վերադարձին առթիւ . հետեւեալ խնդակցական
հեռագիրը զրկուեցաւ . Արքունի Դիւանապետին ,
Գերշ . Տ . Սուրէն Արքեպս . ի կողմէ , Մայիս 2ին :

«Նորին Վեհափառութիւն Մեծն Հիւսէյն Թագաւորի
իր սիրեցեալ երկիրը յաղթական եւ ապանով վերա-
դարձին առթիւ , յանուն Երուսաղէմի Հայոց Պատրիար-
խութեան եւ Յորդանանու Հայ համայնքին , կ'առաջնեն
Նորին Վեհափառութեան մեր ամենէն անկեղծ արտա-
յայտութիւնը բարիգաղութի եւ հաւատարմութեան , եւ
կ'աղօթենք Ամենակալ Աստուծոյ , այս առթիւ , պան-
պանել Նորին Վեհափառութիւնը եւ իր Գանը՝ իրեն
ապաստան երկրին եւ Արար ժողովուրդին» :

Պաշտօնաթերթիս բարեմիտ եւ պատուական
մէկ բարեկամը հետեւեալ նկատողութիւնը
կ'ընէ կապակցութեամբ մեր այն յայտարար-
ութեան թէ «Արտասահմանի բոլոր Քահանայ
Հայրերուն նուէր կը զրկուի Սիոն պաշտօնա-
թերթը , եթէ իրենց հասցէները մեզի զրկուին» :

«Ներեցէ՛ որ առաւելեմ պատշոնաբերից ետեւի
կողմին վրայ դրուած բոլոր Քահանայից Սիոն նուէր
զրկելու Ձեր առաջարկին : Արտասահմանի մէջ տա-
նակներով Քահանայ Հայրեր կան որոնք կրնան ալ եւ
սիրով կուտան տարուան մը բաժնեկին Սիոնի պէս
հրատարակութեան մը՝ որ իրենց կը ջամբէ ամբողջ
տարուան ընթացքին մօքի եւ հոգիի սնունդ» :

Խմբագրութիւնս կը պատասխանէ . Վերո-
յիշեալ յայտարարութիւնը կը վերաբերէր
յատկապէս բոլոր այն Քահանայ Հայրերուն՝
որոնք Սիոն չէին ստանար ցարդ : Ունինք պատ-
ուական փազանդ մը Քահանայ Հայրերու՝ որ-
ոնք Սիոն կը ստանան եւ կանոնաւորաբար կը
վճարեն իրենց բաժնեկիւնները : Անոնք որոնք
բացառիկ զոհողութեամբ կ'ընէին բարոյական
այս պարտաւորութեան կատարումը , Սիոն
զօհոն պիտի չմտայ եթէ անոնք իրենց այդ
զոհողութիւնը յատկացնեն իրենց ընտանիք-
ներու եւ իրենց մօքի բարգաւաճման իսկ ա-
նոնք որ , բոտ սիրելի նամակագրի հաւատա-
մին , «կրնան ալ եւ սիրով կուտան տարուան
մը բաժնեկիւնը , մտան ենք որ պիտի Հարու-
նակեն իրենց վճարումները , եթէ ոչ անպատ-
ճառ իրենց բաժնեկիւն՝ զէ՛ք շփան բարգաւաճ-
ման Սիոնի» :